Հեռահաղորդակցություն և փոստ

Ներածություն

Հեռահաղորդակցության և փոստի բնագավառում ՀՀ օրենսդրությունը գրեթե ամբողջովին չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը, բացառությամբ հեռահաղորդակցության և փոստի ոլորտի ընդհանուր իրավական դաշտին, տվյալների պաշտպանությանը, վճարման համակարգերին և փոստային ծառայություններին վերաբերող որոշ իրավական նորմերի:

Հեռահաղորդակցության և փոստի բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է հեռահաղորդակցության և փոստի ոլորտի ընդհանուր իրավական դաշտի, հեռահաղորդակցության բնագավառում գործողությունների ծրագրի, ինտերնետի, ցանցային անվտանգության, տվյալների պաշտպանության, էլեկտրոնային առևտրի, ռադիոհաճախությունների, վճարման համակարգերի, փոստային ծառայությունների, տեղեկատվական հասարակության հետ կապված խնդիրներ:

Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»[1], «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»[2], «Անհատական տվյալների մասին»[3], «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»[4], «Հեռուստատեսության և ռադիոյի մասին»[5], «Փոստային կապի մասին»[6] ՀՀ օրենքներով, ինչպես նաև «Արմենթել «ՀՁ փակ բաժնետիրական ընկերության թիվ 60 լիցենզիայի վերախմբավորված և լրացված տարբերակը հաստատելու մասին»[7], «Հայաստանի Հանրապետությունում շարժական կապի ծառայություններ մատուցելու համար մրցույթի արդյունքները հաստատելու և լիցենզիա տրամադրելու մասին»[8] ՀՀ կառավարության որոշումներով, «Փոստային կապի ծառայությունների սակագների մասին» ՀՀ կապի նախարարության հրամանով: Չնայած սրանց առատությանը՝ դրանք, այնուամենայնիվ, ամբողջապես չեն նախատեսում ԵՄ օրենսդրական պահանջները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ-ում հեռահաղորդակցության և փոստի բնագավառի ներկայիս օրենսդրական դաշտը բավական թերի է: Այս առումով հիմնականում առանձնանում են հեռահաղորդակցության համընդհանուր ծառայություններին, լիցենզավորմանը, տեղական շղթային առանձնացված մուտքի հնարավորությանը, էլեկտրոնային առևտրին, փոստային ծառայություններին, անհատական տվյալներին վերաբերող ոլորտները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Հեռահաղորդակցություն և փոստ» գլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

2006 թվականի ընթացքում կմշակվի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ՝ գործող «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքը ԵՄ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Հիշյալ փաստաթղթի համապատասխանեցման համար հիմք է Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1999թ. դեկտեմբերի 13 թիվ 1999/93/EC դիրեկտիվը:

2007 թվական

Թվային անթել հեռահաղորդակցության (DECT) համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմաններին առնչվող խնդիրների կարգավորման նպատակով կմշակվի «Թվային անթել հեռահաղորդակցության (DECT) համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի նախագիծ և նախատեսվում է իրականացնել 2007թ. 2-րդ եռամսյակի ընթացքում՝ հիմք ընդունելով Եվրոպական Խորհրդի 1991թ. հունիսի 3-ի թիվ 91/287/EEC դիրեկտիվը:

---

[1] ՀՕ-176-Ն, 08.07.2005թ.:
[2] ՀՕ-18, 25.12.2003թ.:
[3] ՀՕ-422, 08.10.2002թ.:
[4] ՀՕ-40, 14.12.2004թ.:
[5] ՀՕ-293, 28.12.2001թ.:
[6] ՀՕ-46, 14.12.2004թ.:
[7] Թիվ 1465-Ն, 03.11.2004թ.:
[8] Թիվ 1480-Ա, 11.05.2004թ.:

Կմշակվի «Թվային բջջային հեռահաղորդակցության համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի նախագիծ, որի համար հիմք են Եվրոպական խորհրդի 1987թ. հունիսի 25-ի թիվ 87/372/EEC դիրեկտիվի հիմնադրույթները:

Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցային վերջնակետային սարքավորումների և դրանց փոխադարձ համապատասխանությանը վերաբերող խնդիրների կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցային վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» կառավարության թիվ N2228-Ն[9], 15.12.2005 որոշման մեջ՝ հիմնվելով Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1999թ. մարտի 9-ի թիվ 1999/5/EC դիրեկտիվի դրույթների վրա:

Նախատեսվում է մշակել «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, ինչպես նաև «Անհատական տվյալների մշակման և դրանց ազատ տեղաշարժի հետ կապված հարցերով լիազորված անհատների պաշտպանության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1995թ. հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/EC դիրեկտիվի հիման վրա:

Ներքոհիշյալ ՀՀ նորմատիվ իրավական ակտերն են նախատեսվում համապատասխանեցնել Եվրամիության համապատասխան օրենսդրությանը: Իսկ դրանց բացակայության դեպքում կմշակվեն նորերը՝ հետևյալ ժամանակացույցով:

Հիմնված լինելով Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. մարտի 7-ի, 2002/21/EC դիրեկտիվի հիմնարար սկզբունքների և մոտեցումների վրա՝ ընդունվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը, իսկ նախորդ՝ «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքը ուժը կորցրած է համարվում: Վերջիններս նպատակ ունեն լուծելու էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների հետ կապված ընդհանուր իրավական դաշտին վերաբերող խնդիրները՝ կապված ներկայիս օրենսդրական դաշտի անկատարության հետ: Վերջին երկու օրենքների նախագծերի աշխատանքները կկատարվեն 2007թ. 1-ին եռամսյակի վերջում:

Կմշակվի «Անհատական տվյալների մասին« ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ և «Էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառի գաղտնիության պաշտպանության մասին» օրենքի նախագիծ, որի համար կընդունվեն Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002 թ. հուլիսի 12-ի 2002/58/EC դիրեկտիվի հիմնադրույթները: Այն նախատեսվում է իրականացնել մինչև 2007թ. 1-ին եռամսյակը:

Հեռահաղորդակցության ոլորտում ընկերությունների և ծառայությունների լիցենզավորման կարգը ԵՄ-ում գործող կարգին առավել համահունչ դարձնելու նպատակով նախատեսվում է մշակել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, ինչպես նաև մշակել «Էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի շահագործման և ծառայությունների մատուցման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ, որոնց հիմքում ընկած կլինի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. մարտի 7-ի 2002/20/EC դիրեկտիվը՝ «Էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի շահագործման և ծառայությունների մատուցման լիցենզավորման մասին» (լիցենզավորման դիրեկտիվ): Սույն նորմատիվ իրավական ակտերի համապատասխանեցումը նախատեսվում է իրականացնել 2007թ. 3-րդ եռամսյակի ընթացքում:

Տեղական ցանցերին առանձնացված մուտքի տրամադրման կարգի սահմանման նպատակով կմշակվի «Տեղական ցանցերին առանձնացված մուտքի տրամադրման մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000թ. դեկտեմբերի 18-ի թիվ (EC) 2887/2000 կանոնակարգի մոտեցումների հիման վրա:

2008 թվական

Սույն տարվա 1-ին եռամսյակի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում: Այն կիրականացվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. մարտի 7-ի, 2002/19/EC դիրեկտիվի հիմնադրույթների համաձայն:

2009 թվական

Փոստային ծառայությունների ներքին շուկայի զարգացման և այդ ծառայությունների որակի զարգացմանն ուղղված համընդհանուր կանոնների սահմանման նպատակով կմշակվեն «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների

[9] 2228-Ն, 15.12.2005

նախագծեր: Նշյալ օրենքների նախագծերի մշակման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2009թ. 2-րդ եռամսյակի ընթացքում:

Վերը նշված երկու ակտերի մշակումը նախատեսվում է կատարել Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1997թ. դեկտեմբերի 15-ի թիվ 97/67/EC դիրեկտիվի հիմնադրույթների հիման վրա:

2009 թ. 2-րդ եռամսյակում նախատեսվում է մշակել «Էլեկտրոնային առևտրի մասին» օրենքի նախագիծ, որը օրենքի մակարդակով կկարգավորի ներկայիս գործող էլեկտրոնային առևտուրը: Սույն օրենքի մշակումը նախատեսվում է իրականացնել Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000թ. հունիսի 8-ի թիվ 2000/31/EC դիրեկտիվի տրամաբանությամբ:

Բացի օրենսդրական փոփոխություններից, որոնք կիրականացվեն 2007թ. ընթացքում, նույն տարվա 4-րդ եռամսյակի ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանն առընթեր նախատեսվում է ստեղծել Ցանցային և տեղեկատվական անվտանգության գործակալություն, որը հիմնված կլինի Եվրոպական խորհրդարանի 2004թ. մարտի 10-ի թիվ 460/2004 կանոնակարգի հիմնադրույթների վրա:

2009թ. 3-րդ եռամսյակի ընթացում նախատեսվում է մշակել «Հեռահաղորդակցության և փոստի համընդհանուր ծառայությունների և դրանց օգտագործողների իրավունքների մասին» համապատասխան իրավական ակտ, որը հիմնված կլինի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002 թ. մարտի 7-ի 2002/22/EC դիրեկտիվի (համընդհանուր ծառայությունների դիրեկտիվ) սկզբունքների հիման վրա:

1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	Եվրոպական Խորհրդի և Եվրոպառլամենտի դեկտեմբերի 13, 1999թ-ի թիվ 1999/93/EC դիրեկտիվ՝ Եվրոպական համայնքի մակարդակով էլեկտրոնային ստորագրության մասին:	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն)	4-րդ եռամսյակ	31	փորձաքննություն խորհրդատվություն,
			ԸՆԴԱՄԵՆԸ		31	
			2007			
2.	«Թվային անթել հեռահաղորդակցության (DECT) համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի նախագծի մշակում	Եվրոպական Խորհրդի հունիսի 3, 1991թ-ի թիվ 91/287/EEC դիրեկտիվ՝ Եվրոպական թվային անթել հեռահաղորդակցության (DECT) համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	փորձաքննություն խորհրդատվություն
3.	«Թվային բջջային հեռահաղորդակցության համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ» » ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի նախագծի մշակում	Եվրոպական Խորհրդի հունիսի 25, 1987թ-ի թիվ 87/372/EEC դիրեկտիվ՝ համա-Եվրոպական թվային բջջային հեռահաղորդակցության համակարգված ծանուցման համար տրամադրվող հաճախությունների սահմանների վերաբերյալ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	փորձաքննություն խորհրդատվություն
4.	«Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցային վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ N2228-Ն, 15.12.2005 որոշման փոփոխություններ և լրացումներ	Եվրոպական Խորհրդի և Եվրոպառլամենտի մարտի 9, 1999թ-ի թիվ 1999/5/EC դիրեկտիվ՝ ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցային վերջնակետային սարքավորումների և դրանց փոխադարձ համապատասխանության վերաբերյալ:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2-րդ եռամսյակ	76	փորձաքննություն խորհրդատվություն

	կատարելու մասին որոշման նախագծի մշակում					
5.	«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի հոկտեմբերի 24, 1995 թ-ի թիվ 95/46/EC դիրեկտիվ՝ անձնական տվյալների մշակման և դրանց ազատ տեղաշարժի հետ կապված հարցերով լիազորված անհատների պաշտպանության մասին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2-րդ եռամսյակ	77	նյութատեխնիկական միջոցներ, շենքային պայմաններ
6.	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի մարտի 7, 2002 թ-ի 2002/21/EC դիրեկտիվ՝ էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների հետ կապված ընդհանուր իրավական դաշտի վերաբերյալ (հիմնարար դիրեկտիվ)	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով)	3-րդ եռամսյակ	70	
7.	• «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառի գաղտնիության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի հուլիսի 12, 2002 թ-ի 2002/58/EC դիրեկտիվ, անձնական տվյալների և էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառի գաղտնիության պաշտպանության մասին (գաղտնիության և էլեկտրոնային հեռահաղորդակցության մասին դիրեկտիվ)	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով)	3-րդ եռամսյակ	37	փորձաքննություն խորհրդատվություն
8.	• «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի շահագործման և ծառայությունների մատուցման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագծի	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի մարտի 7, 2002 թ-ի 2002/20/EC դիրեկտիվ, էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի շահագործման և ծառայությունների մատուցման լիցենզավորման մասին (լիցենզավորման դիրեկտիվ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	3-րդ եռամսյակ	37	փորձաքննություն խորհրդատվություն

	մշակում					
9.	«Տեղական ցանցերին առանձնացված մուտքի տրամադրման մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի դեկտեմբերի 18, 2000թ-ի թիվ (EC) 2887/2000 Կանոնակարգ՝ տեղական շղթային առանձնացված մուտքի հնարավորության վերաբերյալ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն)	4-րդ եռամսյակ	25	փորձաքննություն խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					352	
2008						
10.	«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի մարտի 7, 2002 թ-ի 2002/19/EC դիրեկտիվ, դեպի էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերին և փոխկապակցված սարքավորումներին մուտքի մասին (Մուտքի դիրեկտիվ)	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով)	1-ին եռամսյակ	59	փորձաքննություն խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					59	
2009						
11.	• «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում • «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում	Եվրոպական Խորհրդի և Եվրոպառլամենտի դեկտեմբերի 15, 1997թ-ի թիվ 97/67/EC դիրեկտիվ՝ Եվրոհամայնքի փոստային ծառայությունների ներքին շուկայի զարգացման և այդ ծառայությունների որակի զարգացմանն ուղղված համընդհանուր կանոնների մասին:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով)	2-րդ եռամսյակ	41	փորձաքննություն խորհրդատվություն
12.	«Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի հունիսի 8, 2000թ-ի թիվ 2000/31/EC դիրեկտիվ՝ ինֆորմացիոն հասարակության ծառայությունների վերաբերյալ որոշակի իրավական կողմերի վերաբերյալ, մասնավորապես ինտերնետ շուկայում էլեկտրոնային առևտրի (Էլեկտրոնային Առևտրի վերաբերյալ դիրեկտիվ)	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2-րդ եռամսյակ	61	փորձաքննություն խորհրդատվություն

13.	«Հեռահաղորդակցության և փոստի համընդհանուր ծառայությունների և դրանց օգտագործողների իրավունքների մասին» համապատասխան իրավական ակտի մշակում	Եվրոպառլամենտի և Եվրոպական Խորհրդի մարտի 7, 2002 թ-ի 2002/22/EC դիրեկտիվ, համընդհանուր ծառայությունների և օգտագործողների իրավունքների մասին՝ կապված էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների հետ (համընդհանուր ծառայությունների դիրեկտիվ)	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	2-րդ եռամսյակ	83	
ԸՆԴԱՄԵՆԸ					186	
ԸՆԴԱՄԵՆԸ					627	

1.2. Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	-	Էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ դասընթաց (5 օր / 2006թ.)	Միջազգային փորձագետների ներգրավում
2.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Էլեկտրոնային առևտրի վերաբերյալ դասընթաց (3 օր/2007թ.)	Միջազգային փորձագետների ներգրավում
3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	-	Անհատական տվյալների վերաբերյալ դասընթաց (5 օր/2007թ.)	Միջազգային փորձագետների ներգրավում
4.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանն առընթեր «Ցանցային և տեղեկատվական անվտանգության գործակալություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ համաձայն «Անհատական տվյալների և էլեկտրոնային հեռահաղորդակցության բնագավառի գաղտնիության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի	Ցանցային և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ դասընթաց (10 օր/2009թ.)	Միջազգային փորձագետների ներգրավում